

# Մանուկներու Սուրբ Գիրքը կը ներկայացնէ

Երեմեայ,  
արցունքներու  
մարդը



Written by: Edward Hughes

Illustrated by: Jonathan Hay

Adapted by: Mary-Anne S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation

has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

[www.M1914.org](http://www.M1914.org)

©2020 Bible for Children, Inc.


License: You have the right to copy or print this story,

as long as you do not sell it.



Երեմեայ ծնաւ կրօնասէր տան  
մը մէջ Jadah թագաւորութեան  
սահմաններէն ներս: Իր հայրը,  
Քեղկիա, քահանայ էր: Անոնք  
կ'ապրէին Անաթովթ քաղաքին  
մէջ, Երուսաղէմի մօտերը,  
թերեւս Երեմեային ծնողքը  
մտածեց, թէ ինքն ալ քահանայ  
կ'ըլլայ: Սակայն Աստուած  
տարբեր ծրագիրներ ուներ:





Երեմիայի ծննդեան ատեն,  
Աստուծոյ ժողովուրդը  
անգամ մը եւս Աստուծոյ  
Խօսքին չէր հնազանդեր:  
Մօտաւորապէս բոլորը  
թագաւորէն մինչեւ  
ամենապարզ բանուորը,  
կուռքեր եւ սիսալ  
ասուածներ կը պաշտէին,  
նոյնիսկ Աստուծոյ սուրբ  
տաճարին  
մէջ:




Երբ Երեմիա  
երիտասարդ  
մարդ եղաւ,  
Աստուած  
խօսեցաւ իրեն.  
"Ես գիտեմ քեզի  
նախքան քու ծնունդդ",  
ըսաւ Աստուած Երեմեայիս եւ ես ծրագրած  
եմ, "որ դուն ինձի համար խօսիս":



Աստուծոյ կանչը վախցուց Երեմեային: "Ա՛հ, Տէր Աստուած", պոռաց ան: "Ես չեմ կրնար խօսիլ, մանուկ եմ տակաւին": Ան մանուկէ աւելի պզտիկ էր տակաւին քսան տարեկան: Բայց Երեմեայ չէր

մտածեր, որ ինք կրնայ խօսիլ ամբողջ չարութեան մասին, որ իր շուրջ տեղի կ'ունենար Աստուծոյ դէմ:



"Մի՛ վախ՛նար", ըսաւ Աստուած  
Երեմեային. "Գնա՛ ուր որ ես քեզ  
կը դրկեմ:  
Ըսէ ինչ որ  
ես կ'ըսեմ  
քեզի:

Ես հետդ եմ  
եւ ես քեզի կը  
փրկեմ": Յետոյ  
Աստուած մասնաւոր բան  
մը ըրաւ: Աստուած դպաւ  
Երեմեայ բերնին:



Աստուած Երեմեայի տուաւ ուժ եւ արիութիւն  
եւ խելացութիւն: Ան յանդգնութեամբ խօսեցաւ,  
յիշեցնելով ժողովուրդը, թէ Աստուած կը սիրէր  
իրենց եւ կ'ուզէր զիրենք օգնել: Բայց որեւէ մէկը

մտիկ չ'ըրաւ  
իրեն, Նոյնիսկ  
թագաւորը:




Նոյնիսկ քահանաները բարկացան եւ ստիպեցին իրեն, որ այլեւս չխօսի Աստուծոյ մասին: Կային նաեւ կեղծ մարգարէներ, որոնք

կ'ըսէին, թէ Երեմեայի իրականութիւնը չի խօսիր:



Երեմեայի յիշեցուց ժողովուրդը, թե հարիւր տարիներ առաջ, հիւսիսային Իսրայէլի թագաւորութիւնը լքեր էր Աստուծոյ: Անոնց թշնամիները, ասորիները, գրաւեր էին հողը եւ Իսրայէլի ժողովուրդը հեռացուցեր էին:





Հիմա Երեմեայի


ժողովուրդը, հարաւային  
թագաւարութիւնը լքեր

Էր Աստուծոյ: Թշնամի  
բանակները արդէն կը  
մօտենային: Արդեօ՞ք

Աստուած պիտի  
արտօներ, որ անոնք  
իր ժողովուրդին  
գրաւէին եւ արտորէին:



Ժողովուրդը կուռքերուն կը վատահեր: Կրնայի՞ն  
կուռքերը ազատել իրենց թշնամիներէն:  
Ո՛չ: Միայն Աստուած կրնար փրկել  
զիրենք: Ժողովուրդը շատ զայրացաւ  
Երեմեայէն, եւ ծրագրեցին զայն  
մեռցնել: Բայց Աստուած  
ազատեց իր ծառան:



Վերջապես, Աստուած բան  
մը ըսաւ, որ զարմացուց  
Երեմեային: Աստուած  
ըսաւ. "Մի՛ աղօթեր այս  
ժողովուրդին: Ես իրենց  
մտիկ պիտի չընեմ երբ  
պոռան եւ իմ օգնութիւնս  
խնդրեն":




Երեմեայ զգուշացուց  
Թագաւորը, որ  
պատերազմը պիտի  
կորսնցնէ Բաբելոնի  
բանակին դէմ: Թագաւորը  
զայրացաւ եւ Երեմեային  
բանտարկեց: Նոյնիսկ  
բանտին մէջ, Երեմեայ  
շարունակեց քարոզել եւ  
վստահիլ Աստուծոյ:




Բանտէն ելլելէ  
ետք երեմեայ նորէն  
քարոզեց, որ թագաւորը  
եւ ժողովուրդը  
վերադառնան Աստուծոյ  
եւ Անոր վստահին: Այս  
անգամ թագաւորը  
երեմեային  
ցեխոտ բանտի  
մը մէջ իջեցուց:



Սակայն Աստուած թագաւորին սրտին մէջ  
կ'աշխատէր: Ան գաղտնօրէն փրկեց Երեմեային  
եւ անոր հարցուց, թէ ինչ կ'ուզէր Աստուած, որ  
թագաւորը  
կատարէ.



"Գնալքերուլթեան մէջ եւ Աստուած կ'ըսէ պիտի  
ապրիս", այդ էր պատասխանը:



Բաբելոնեան բանակը գրաւեց  
Երուսաղէմը եւ ամբողջ Յուդան:  
Անոնք փլեցին պատերը եւ  
շէնքերը եւ այրեցին ամէն ինչ:  
Աստուած ըսաւ Իր ժողովուրդին,  
որ գերութեան  
պիտի երթան  
եօթնասուն  
տարիներ,

եւ յետոյ Ան  
իրենց պիտի բերէ  
խոստացուած  
հողը:



Երեմեայ, արցունքներու մարդը

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,  
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Երեմեայ

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"  
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մեջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:  
Յովհաննու 3:16

